

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԼԻԼԻԹ ԱՇՈՏԻ ՍԱՐԳՍՅԱՆ

ԼԵԶՎԱԿԱՆ ՏՆՏԵՍՄԱՆ ԽՆԴԻՐԸ ԱՆԳԼԵՐԵՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՍՔՈՒՄ

Ժ.02.07 - «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ – 2017

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ Բ.Գ.Թ., պրոֆեսոր Ա.Է. Չուբարյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Բ.Գ.Դ., պրոֆեսոր Շ.Հ. Պարոնյան
Բ.Գ.Թ., պրոֆեսոր Ե.Ս. Մխիթարյան


Առաջատար կազմակերպություն՝ Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2017թ. հունիսի 21-ին՝ ժամը 12:30-ին, ՀՀ ԲՈՀ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող 009 «Օտար լեզուներ» մասնագիտական խորհրդի նիստում (Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017թ. մայիսի 19-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար
Բ.Գ.Դ., պրոֆեսոր՝



Ե.Լ. Երզնկյան

Խոսքային գործունեության ընթացքում խոսակիցների կողմից հաղորդակցական միջոցներ ընտրելու և դրանք համապատասխանաբար զուգակցելու հարցում կարևոր դեր է կատարում լեզվական տնտեսման սկզբունքը, որը դրսևորվում է լեզվի տարբեր հայեցակերպերում: Այն ենթադրում է տեքստի իմաստային կառուցվածքի խտացում, որը թելադրված է հաղորդակցության գործաբանական առանձնահատկություններով և ծառայում է տվյալ խոսքային իրադրությունում կոնկրետ հաղորդակցական նպատակների իրականացմանը:

Վերջին շրջանի հետազոտությունները, և մեր աշխատանքն այդ թվում, ցույց են տալիս, որ լեզվական տնտեսման միջոցները, թեև ձևի առումով սեղմ, բայց իմաստային առումով տարողունակ կառույցներ են: Դրանք հնարավորություն են տալիս ձևական կառուցվածքի կրճատմանը զուգահեռ ձևավորել զանազան ներիմաստներ, որոնք միտված են արտահայտելու առավելագույն տեղեկատվություն լեզվական միավորների նվազագույն կազմով՝ ապահովելով մտքի կուռ և տրամաբանական կառուցվածք, հակիրճություն, տեղեկատվական հագեցվածություն, ժամանակի և տեղի տնտեսում: Թերևս դրանով էլ կարելի է բացատրել լեզվական տնտեսման միջոցների լայն կիրառությունը տարբեր գործառական ոճերում, այդ թվում՝ գիտական խոսքում:

Սույն աշխատանքում **ուսումնասիրության առարկան** լեզվական տնտեսման դրսևորման առանձնահատկություններն են անզլերեն գիտական խոսքում: Լեզվական տնտեսման միջոցների դերում շարահյուսական մակարդակում հաճախ հանդես են գալիս զեղչված կառույցները, դերբայական դարձվածները և տեղեկատվությունը սեղմ դարձնելուն ուղղված՝ վերասույթային մակարդակի կրճատումները, ինչպես նաև փոխաբերությունը՝ իմաստաբանական-ճանաչողական մակարդակում: Ուրույն կառուցվածքի շնորհիվ վերջիններս ներակա կերպով հաղորդում են տեղեկատվություն՝ մեծացնելով իրենց տեղեկատվական բեռնվածությունը և ապահովելով տեքստի իմաստային ամբողջականությունը:

Աշխատանքի **արդիականությունը** պայմանավորված է անզլերեն գիտական խոսքում որպես լեզվական տնտեսման միջոց հանդես եկող կառույցների հաղորդակցական-գործաբանական արժեքը բացահայտելու անհրաժեշտությամբ: Նման հնարավորություն ընձեռում է տեղեկատվության խտացման հատկանիշով պայմանավորված կոնկրետ գործառույթների վերհանումը գործաբանական լեզվաբանության դիրքերից լեզվաճանաչողական մոտեցմամբ, ինչը միանգամայն արդիական է:

Աշխատանքի **նպատակն** է իրականացնել անզլերեն գիտական խոսքում հանդես եկող լեզվական տնտեսման միջոցների գործառույթային համալիր վերլուծություն ճանաչողական և գործաբանական լեզվաբանության դիրքերից, գնահատել դրանց դրսևորումների հաղորդակցական արժեքը անզլերեն

գիտական դիսկուրսում և վեր հանել դրանց նշանակությունը անգլալեզու գիտական տեքստերի ստեղծման և ընկալման հարցում:

Սույն **նպատակի** իրագործման համար աշխատանքում առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- դիտարկել խտացումը որպես խոսքում լեզվական տնտեսման սկզբունքի իրացման միջոց՝ հստակեցնելով խտացման և ներիմաստի ձևավորման փոխհարաբերության բնույթը,

- որոշարկել տեղեկատվության խտացումը պայմանավորող ներլեզվական և արտալեզվական գործոնները՝ լուսաբանելով գիտական դիսկուրսի առանձնահատկությունները լեզվական տնտեսման տեսանկյունից,

- մեկնաբանել զեղչված կառույցների կոնկրետ գործառույթներն անգլերեն գիտական խոսքում դրանց հաղորդակցական, գործաբանական և տեքստակազմիչ նշանակության տեսանկյունից,

- վերլուծել դերբայական դարձված պարունակող կառույցները որպես լեզվական տնտեսման միջոց՝ վեր հանելով նրանց գործառույթյան առանձնահատկությունները անգլերեն գիտական խոսքում,

- լուսաբանել տեղեկատվությունը սեղմելուն ուղղված՝ վերասույթային մակարդակի կրճատումների տեքստակազմիչ նշանակությունն անգլերեն գիտական դիսկուրսում,

- դիտարկել փոխաբերությունը որպես տեղեկատվության խտացման լեզվաճանաչողական կաղապար՝ վերլուծելով դրա կոնկրետ գործառույթներն անգլերեն գիտական խոսքում,

- պարզել ուսումնասիրված լեզվական տնտեսման միջոցների գործածության հաճախականությունն անգլերեն գիտական դիսկուրսում՝ ըստ վերջինիս համապատասխան տարատեսակների և դրսևորումների:

Նշված խնդիրների լուծման նպատակով աշխատանքում ուսումնասիրությունները կատարվել են մի շարք **մեթոդների** համադրական կիրառմամբ: Դրանցից են համատեքստային-նկարագրական, համեմատական, իմաստային և գործաբանական վերլուծության մեթոդներն ու մոտեցումները, որոնք հնարավոր են դարձրել գիտական հաղորդակցության տարբեր իրադրություններում հանդես եկող լեզվական տնտեսման կառույցների գործառույթային համակողմանի հետազոտությունը:

Աշխատանքի **մեթոդաբանական հիմքը** ժամանակակից լեզվաբանության մեջ հաղորդակցության գործաբանական և լեզվաճանաչողական հայեցակերպերի վերլուծությանը և մասնավորապես խոսքաստեղծման ու խոսքընկալման մեխանիզմների դիտարկմանը նվիրված աշխատություններն են¹, որոնք ներառում են տեղեկատվության խտացմանն առնչվող տեսական մոտեցումներ:

¹ Yule G. *Pragmatics*. Oxford: Oxford University Press, 2002; Searle J.R. *Mind, Language and Society: Philosophy in the Real World*. New York: Basic Books, 1998; Langacker R.W. *Concept, Image and Symbol*:

Աշխատանքի **գիպական նորոյթն** այն է, որ լեզվական տնտեսման վերլուծությունն առաջին անգամ իրականացվում է կառուցվածքային-իմաստաբանական, գործաբանական և գործառական յուրահատկությունների քննության լոյսի ներքո, ընդ որում՝ խոսքում գործառական-հաղորդակցական առանձնահատկությունների իրացման համար ելակետային համարելով լեզվական միավորի կառուցվածքը: Նոր է նաև լեզվական տնտեսման տեքստակազմիչ դերի արժևորումն ընդհանրապես և գիտական դիսկուրսում մասնավորապես, դրա իրացման միջոցների՝ որպես լեզվաճանաչողական կառույցների որակումը, ինչպես նաև տնտեսման գործառոյթի համատեքստում դրանց վերլուծությունը գործաբանական-ճանաչողական դիրքերից:

Աշխատանքի **դեռական նշանակությունն** այն է, որ հետազոտության արդյունքում մշակված դրոյթները, առաջադրված հարցադրումները հնարավորություն են ընձեռում նորովի գնահատելու խոսքաստեղծման ու խոսքընկալման ներքին մեխանիզմները, որոշարկելու լեզվական տնտեսման տեքստակազմիչ դերը անգլերեն գիտական խոսքում՝ դրանով իսկ նպաստելով խոսքի հաղորդակցական, ճանաչողական-գործաբանական տեսության հարստացմանը ու հետագա զարգացմանը:

Աշխատանքի **գործնական արժեքը** պայմանավորված է ուսումնասիրության արդյունքների ներդրման հնարավորությամբ գործաբանական լեզվաբանության, տեքստի լեզվաբանության, գործառական քերականության, ոճագիտության դասընթացներում, ինչպես նաև դրանց օգտակարությամբ ակադեմիական միջավայրում կիրառվող անգլերենի դասավանդման շրջանակներում: Ստացված արդյունքները կարող են կիրառություն գտնել նաև անգլալեզու գիտական աշխատություններ գրելիս, գիտական թեմաներով անգլերեն լեզվով ելույթներ պատրաստելիս և հայերենից անգլերեն գիտական թարգմանություններ կատարելիս: Ուրիշ խոսքով՝ դրանք կնպաստեն նաև գիտական անգլերեն բանավոր և գրավոր խոսքի արդյունավետ կառուցման հմտությունների յուրացմանն ու զարգացմանը:

Հետազոտության **փաստական նյութը** գիտական դիսկուրսի գրավոր և բանավոր դրսևորումներն են միջազգային անգլալեզու գիտական հոդվածներում, ակադեմիական և գիտահանրամատչելի ուղղվածության աշխատություններում և բանավոր ելույթներում (շուրջ 820 նմուշ): Գիտական խոսքի նշված երկու տարատեսակների ընտրությունը պայմանավորված է դրանց գրավոր և բանավոր դրսևորումներում ուսումնասիրության առարկա կառույցների գործածության բարձր հաճախականությամբ: Իսկ ընդհանուր

The Cognitive Basis of Grammar. Berlin/ New York: Mouton de Gruyter, 1991; Grice H.P. *Studies in the Way of Words.* Harvard: Harvard University Press, 1989; Croft W., Cruse D.A. *Cognitive Linguistics.* Cambridge: Cambridge University Press, 2004; Cutting J. *Pragmatics and Discourse.* London/ New York: Routledge, 2002; Leech G. *Principles of Pragmatics.* London: Longman, 1983; Levinson S.C. *Pragmatics.* Cambridge: Cambridge University Press, 1983, etc.

առմամբ գիտական խոսքի՝ որպես ուսումնասիրության նյութի ընտրությունը բացատրվում է այն հանգամանքով, որ գիտության լեզվի բնական պահանջն է փոխանցել առավելագույն տեղեկատվություն՝ օգտագործելով հնարավորինս քիչ լեզվական միջոցներ, ինչն էլ իր հերթին թելադրվում է գիտական հաղորդակցության մի շարք պահանջներով:

Ատենախոսության կառուցվածքը պայմանավորված է քննարկվող նյութի պահանջներով: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից՝ համապատասխան ենթագլուխներով, ուսումնասիրության հիմնախնդիրները լուսաբանող և լրացնող ծանոթագրություններից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Ներածության մեջ ներկայացվում են ուսումնասիրության հիմնահարցերը, սահմանվում նպատակն ու խնդիրները, հիմնավորվում են թեմայի ընտրությունը, արդիականությունն ու նորույթը, կատարված հետազոտության տեսական և գործնական արժեքն ու մեթոդաբանական ուղղվածությունը:

Առաջին գլուխը («Լեզվական տնտեսումը գիտական խոսքում. քննության տեսական հիմքերը») բաղկացած է երկու ենթագլուխներից: **Առաջին ենթագլուխը («Լեզվական տնտեսում և խփացում»)** ուսումնասիրում է խտացումը որպես խոսքում լեզվական տնտեսման սկզբունքի իրացման միջոց: Այստեղ խտացումը սահմանվում է որպես լեզվական տնտեսման սկզբունքով պայմանավորված օրինաչափ գործընթաց, որը ներառում է լեզվական համակարգի բոլոր մակարդակները և դրսևորվում է լեզվական միավորների ձևի կրճատմամբ և ընդհանուր բովանդակության պահպանմամբ: Այն ուղղված է առավելագույնս արդյունավետ հաղորդակցություն ապահովելուն՝ ըստ հաղորդակցության գործաբանական պահանջների: Ընդ որում, առանցքային է համարվում այն դրույթը, որ հաղորդման ամբողջականությունն ու արդյունավետությունը որոշվում է ոչ թե օգտագործվող խոսքային միավորների ծավալով, այլ վերջիններիս իրադրային և գործառնական նպատակահարմարությամբ: Ինչպես գիտենք, հաղորդակցության ժամանակ գործում է Փ. Գրայսի առաջարկած քանակի կարգախոսը, համաձայն որի՝ ասույթը պիտի պարունակի ո՛չ ավելի քիչ, ո՛չ էլ ավելի շատ տեղեկատվություն, քան պահանջվում է²: Այսինքն՝ արտակա կերպով պետք է ներկայացվի տեղեկատվության այն մասը, որը բավարար է հաղորդակցության որոշակի պայմաններում հաղորդակցական նպատակի իրագործման համար: Հետևաբար տեքստաստեղծման գործընթացում խոսողը մշտապես կանգնում է ընտրության առաջ, այն է՝ տեքստի բովանդակության որ հատվածին տալ արտակա լեզվական ձևակերպում: Այստեղ առաջ է գալիս տեղեկատվությունը ներակա կերպով հաղորդելու խնդիրը, որը ենթադրում է այնպիսի լեզվական միջոցների ընտրություն, որոնք արտակա կերպով տեղեկատվության որոշակի հատվածն այնպես կարտահայտեն, որ միևնույն ժամանակ ձևականորեն կամ լեզվական

² Grice H.P. *Logic and Conversation* // Syntax and Semantics. New York: Academic Press, 1975.

միավորներով ուղղակիորեն ներկայացված այդ հատվածից հնարավոր կլինի վերականգնել տեղեկատվության մյուս՝ թաքնված հատվածը: Այսպիսով՝ տրամաբանորեն հանգում ենք բովանդակության արտահայտման համար առավել սեղմ, տնտեսող և արդյունավետ ձևի որոնման խնդրին՝ լեզվական կառույցների խտացմանը, որը դիտարկվում է որպես ներիմաստի ձևավորման միջոց: Ընդ որում, այս գործընթացում առանցքային դեր են կատարում համատեքստը և այն արտալեզվական գործոնները, որոնց առկայությամբ տեղի է ունենում հաղորդակցությունը:

Առաջին գլխի երկրորդ ենթագլխում («Խտացման հոգելեզվաբանական, գործաբանական և հանրամշակութային հիմքեր») քննության են առնվում խոսքում տնտեսման սկզբունքի իրացման գործընթացի վրա ազդող լեզվական և արտալեզվական գործոնները: Վերլուծելով և համադրելով հոգելեզվաբանության մեջ ընդունված խոսքաստեղծման գործընթացի կաղապարները՝ գալիս ենք համոզման, որ տեղեկատվության խտացումը տեղի է ունենում խոսքաստեղծման գործընթացի ներքին ծրագրավորման փուլում: Ակնհայտ է, որ խոսքաստեղծման գործընթացում՝ փոխանցվելիք տեղեկատվության համար համապատասխան խոսքային արտահայտության ձև ընտրելիս, հասցեագրողն առաջնորդվում է որոշակի սկզբունքներով, որոնք պայմանավորում են միևնույն տեղեկատվության հաղորդմանն ուղղված տարբեր մակերեսային շարահյուսական կառույցների գոյության հնարավորությունը: Այս սկզբունքների բացատրությունը հնարավոր է գտնել գործաբանության մակարդակում: Մասնավորապես՝ տեքստի բովանդակության արտահայտման համար այս կամ այն շարահյուսական կառուցվածքի ընտրությունը, որն իր հերթին անմիջականորեն կապված է խտացման՝ որպես տնտեսման սկզբունքի իրացման հետ, պայմանավորված է այնպիսի գործոններով, ինչպիսիք են տեքստում տեղեկատվության բաշխումը (թեմատեմատիկ կազմակերպումը կամ կանխենթադրույթի և նախադրույթի հարաբերակցությունը), հասցեագրողի խոսքային մտադրությունը (խոսողական ակտերի տեսակն ու հերթագայությունը), տեքստի գործաբանական ուղղվածությունը, հաղորդակցության մասնակիցների փոխհարաբերությունը, հաղորդակցական միջավայրը և այլն: Ընդ որում, ասույթի տեղեկատվայնությունը, հետևաբար և հաղորդակցության արդյունավետությունը որոշվում են ասույթի այն մասով, որը չի մտնում դիսկուրսի գործաբանական համընդհանրույթի³ մեջ: Ինչպես ցույց է տալիս խտացման գործաբանական հիմքերի դիտարկումը, գործաբանական բնույթի այս տեղեկությունները խոսքաստեղծման գործընթացում պայմանավորում են լեզվական միջոցների ընտրությունը և տեքստի տեղեկատվական ներուժի ընդլայնման հնարավորություն են ստեղծում՝ լեզվական միջոցների տնտեսմամբ հանդերձ:

³ Kempson M.R. *Presupposition and the Delimitations of Semantics*. Cambridge: Cambridge University Press, 1975.

Աշխատանքի երկրորդ գլուխը («Լեզվական տնտեսման դրսևումներն անգլերեն գիտական խոսքում») բաղկացած է չորս ենթագլուխներից: **Առաջին ենթագլուխը («Ձեռնումը՝ որպես լեզվական տնտեսման շարահյուսական միջոց»)** անդրադառնում է անգլերեն գիտական խոսքում գեղջված կառույցների գործառության առանձնահատկություններին: Նախևառաջ որոշարկվում է գեղջված ասույթների կարգավիճակը: Ի տարբերություն անավարտ ասույթների և միակզմ նախադասությունների՝ գեղջված կառույցները բնութագրվում են կառուցվածքային անավարտությամբ և իմաստային լիարժեքությամբ, որը ծառայում է ներակա կերպով տեղեկատվություն հաղորդելուն: Օրինակ՝

*So at first they thought they were triggering some kind of laugh reflex, but no, they quickly realized they had found the points in her neocortex that detect humor, and she just found everything hilarious whenever they stimulated these points. "You guys are so funny just standing around," was the typical comment and they weren't funny, **not while doing surgery.** (K.G.H.Th.: 5:28-6:13)*

Տվյալ օրինակում, որը բանավոր ելույթից է, խոսողը պատմում է գիտափորձի մասին, որի ժամանակ փորձել են մարդու գլխուղեղի կեղևում հայտնաբերել հումորի ընկալման համար պատասխանատու հատվածը: Ամեն անգամ, երբ խթանել են այդ կետերը, գիտափորձի ենթարկվող արձագանքել է ծիծաղելով: Վերջինս արձագանքել է՝ նշելով, որ գիտափորձ կատարողները շատ զվարճալի տեսք ունեն, մինչդեռ վերջիններս իրականում բավականին լուրջ տեսքով կենտրոնացած են եղել իրենց աշխատանքի վրա: Այս իրավիճակը նկարագրելիս խոսողը միտումնավոր կերպով առանձնացնում է ժամանակի պարագան (*not while doing surgery*)՝ այս կերպ ընդգծելով գլխուղեղի կեղևում հումորի ընկալման համար պատասխանատու կետերի խթանման արդյունքում գիտափորձի ենթարկվողի կողմից իրականության սուբյեկտիվ ընկալման և վերջինիս շուրջ տիրող օբյեկտիվ իրավիճակի միջև առկա հակադրությունը, այսինքն՝ այն փաստը, որ գիտափորձն իրականացնողներն ամենևին էլ զվարճալի տեսք չունեին: Իսկ օբյեկտիվ իրադրությունը արտահայտվում է ժամանակի պարագայի միջոցով, որը վերը նկարագրված հակադրությունն արտահայտելու նպատակով անջատված է նախադասության հիմնական մասից: Այդ անջատումը կատարվում է ամբողջությամբ գեղջված ենթակայով և մասնակի գեղջված ստորոգյալով արտահայտված ասույթի շնորհիվ: Մասնավորապես՝ *not while doing surgery* գեղջված ասույթում ձևականորեն արտահայտված չէ նախորդ ասույթի *they were not funny* պրեդիկատիվ հարաբերությունը: Այլ կերպ ասած՝ վերոնշյալ հակադրությունն առավել ակնառու դարձնելու նպատակով խոսողն օգտագործում է կրկնակի ժխտում: Նա դա անում է գեղջման միջոցով, ինչը հատուկ նպատակ է հետապնդում, այն է՝ ասույթի ձևական կառուցվածքից բաց թողնելով կամ ներակա կերպով ներկայացնելով տեղեկատվության արդեն հայտնի հատվածը՝ *they were not funny*՝ շեշտադրել նոր, բովանդակային

առումով կարևոր տեղեկատվությունը՝ *while doing surgery*: Լեզվական միջոցների նման ընտրությունը թույլ է տալիս առանձնացնել և շեշտադրել ասույթի՝ տեղեկատվական առումով առավել կարևոր բաղադրիչները, ինչպես նաև հնարավորություն է ընձեռում խոսողին խուսափել անհարկի կրկնությունից՝ այդպիսով նաև ժամանակ տնտեսելով և խոսքն ավելի դինամիկ, արդյունավետ ու տպավորիչ դարձնելով:

Ընտրված տեքստերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ զեղչված կառույցների վերոնշյալ գործառույթը՝ ասույթի՝ տեղեկատվական առումով առավել կարևոր իմաստային բաղադրիչի առանձնացումը, ընկած է երկու այլ՝ իմաստը ճշգրտելու և խթանելու գործառույթների հիմքում, որոնցով ուսումնասիրվող կառույցները հաճախ հանդես են գալիս անզվերեն գիտական խոսքում:

Ինչպես լեզվի բոլոր մյուս գործառական ոճերում, գիտական խոսքում նույնպես զեղչումը հանդես է գալիս հուզական-արտահայտչական գործառույթով, որի վերջնանպատակն այս դեպքում, սակայն, ոչ թե խոսքի հասցեատիրոջ վրա զեղազիտական ազդեցություն գործելն է, այլ խոսքն ավելի պատկերավոր, համոզիչ ու ընկալելի դարձնելը: Այսպես՝

Well, right about the same time, around 1950, concerns developed about the loss of Southeast Asia. That's what led the United States into the Indochina wars, the worst atrocities of the post-war period -- partly lost, partly not. (Ch.O.W.: 8:46-9:05)

Տվյալ օրինակում, որը Ն. Խոմսկու դասախոսությունից է, վերջինս, խոսելով ԱՄՆ աշխարհակալ քաղաքականության մասին, անդրադառնում է Հնդկաչինական պատերազմին՝ որակելով այն որպես հետպատերազմական շրջանի դաժանագույն վայրագություն, որի արդյունքում ԱՄՆ-ի կրած պարտությունը համարում է մասնակի: Վերջին փաստը շեշտադրելու, խոսքն ավելի տպավորիչ դարձնելու և դրանով իսկ ունկնդիրների ուշադրությունը պահելու նպատակով դիմում է զեղչման: Մասնավորապես՝ նախ զեղչում է նախորդող համատեքստից վերականգնելի պրեդիկատիվ հարաբերությունը (...*Indochina wars...which were partly lost...**), ապա կրկնում է *partly* մակբայը՝ վերջինս երկրորդ անգամ գործածելիս խուսափելով նաև *lost* դերբայի գործածությունից և թողնելով միայն ժխտական *not* մասնիկը: Այսպիսով՝ իրար պես միավանկ և միևնույն [o] ձայնավորը պարունակող *lost* և *not* բառերը, առանձին-առանձին միանալով *partly* մակբային, բարեհնչություն և մեղեդայնություն են հաղորդում խոսքին՝ այն դարձնելով առավել տպավորավոր և դինամիկ: Միևնույն ժամանակ դրանք ունկնդիրների ուշադրությունը հրավիրում են պատերազմում կրած պարտության ոչ միանշանակ լինելու կարևոր հանգամանքի վրա: Այս օրինակը ցույց է տալիս նման հնարների կարևորությունը տվյալ դասախոսության պես երկարատև՝ մոտ 1 ժամ տևողությամբ ելույթների ժամանակ լսարանին չհոգնեցնելու և լսարանի

ուշադրությունը պահելու, ինչպես նաև առանց այն էլ լայնածավալ և հազեցած նյութը ելույթին հատկացված կոնկրետ սահմանափակ ժամանակում տեղավորելու և հնարավորինս սպառիչ կերպով ներկայացնելու առումով:

Այսպիսով՝ զեղչումը, ծառայելով տեղեկատվության խտացմանը և զուգահեռ իրականացնելով դրա հետ առնչվող այլ գործառույթներ, դիտարկվում է որպես գիտական անգլերենին բնորոշ՝ տեքստի տեղեկատվայնության ապահովմանն ուղղված շարահյուսական գործընթաց:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլուխը («Երկրորդական ստորոգում պարունակող կառույցները՝ որպես լեզվական տնտեսման դրսևորում») նվիրված է դերբայական դարձվածներով կազմությունների կարգավիճակի որոշարկմանը մեկից ավելի ստորոգում պարունակող կառույցների համակարգում: Դերբայական դարձվածները դիտարկելով որպես երկրորդական կամ ներակա ստորոգում կրող կառույցներ՝ այն նախադասությունները, որոնցում դրանք հանդես են գալիս, համարում ենք մեկից ավելի ստորոգում պարունակող բազմանախադրույթային կառույցներ: Ընդ որում, հիմնական նախադրույթն արտահայտվում է առաջնային կամ արտակա ստորոգման միջոցով, մինչդեռ երկրորդական ստորոգման միջոցով ներկայացված կախյալ կամ երկրորդական նախադրույթները խոսքում իրացվում են հիմնական նախադրույթի հետ սերտ կապի մեջ՝ արտահայտելով բազմազան իմաստային-տրամաբանական կապեր:

Երկրորդ գլխի երրորդ ենթագլխում («Դերբայական դարձվածների կիրառությունը որպես լեզվական տնտեսման միջոց») շարահյուսական հոմանշության համատեքստում հանգամանորեն վերլուծվում են անգլերեն գիտական խոսքում դերբայական դարձվածների իրականացրած գործառույթները: Վերլուծության համար ելակետային է այն դրույթը, որ ձևական արտահայտության տարբերությունները անպայմանորեն բերում են բովանդակային տարբերությունների, որոնք էլ իրենց հերթին հանգեցնում են գործառական տարբերությունների: Սա բացառում է առանց նախադասության իմաստային կառուցվածքի խախտման դերբայական դարձվածը հոմանիշ նախադասությամբ փոխարինելու հնարավորությունը: Բացի այդ, նման փոխարինումը, ըստ էության, հակասում է հոմանշության բուն էությանը: Հենց լեզվական տնտեսման սկզբունքով պայմանավորված՝ բացարձակապես նույնական զուգահեռ ձևեր լեզվում գոյություն ունենալ չեն կարող, ինչը նշանակում է, որ թեկուզև աննշան չափով, բայց նախադասության իմաստային կառուցվածքն անպայմանորեն փոփոխություններ կրում է փոխարինման դեպքում: Այսպես՝

Reflecting on conversations with Argentine feminist anthropologists, social scientists, and reproductive rights activists, this paper analyzes why the Argentine movement to legalize abortion relies on the contested concept of human rights. (M.R.R.R.J.L.A.: 136)

Նշված օրինակում ունենք նախադասության՝ արտակա ստորոգում պարունակող մասի հետ ոչ այնքան հստակ ու միանշանակ իմաստային-

տրամաբանական հարաբերության մեջ գտնվող դերբայական դարձված: Արտաքուստ ներկայացված է գործողության ձևի և միջոցի իմաստային հարաբերություն: Մինչդեռ իրականում դերբայական դարձվածով ներկայացված իրադարձությունը արտակա ստորոգմամբ ներկայացված իրադարձությանն առնչվում է նաև հավելման իմաստային հարաբերությամբ: Այսինքն՝ հեղինակի խնդիրն է հողվածի թեզիսի շրջանակում հնարավորինս հակիրճ, բայց և ընդգրկուն կերպով ընթերցողին ներկայացնել հողվածում կատարված աշխատանքը. հողվածում ներկայացվում են ինչպես կանանց վերարտադրողական իրավունքի արգենտինացի պաշտպանների հետ հեղինակի ունեցած զրույցները, այնպես էլ վերլուծվում է Արգենտինայում հղիության արհեստական ընդհատման օրինականացման համար մղվող պայքարը մարդու իրավունքների համատեքստում: Մյուս կողմից՝ դերբայական դարձվածը, իր շարահյուսական ձևով (-ing դերբայ) արտացոլելով երկու իրադարձությունների համաժամանակյա բնույթը (*Reflecting on conversations with... & this paper analyzes why...*), ցույց է տալիս, որ այդ իրադարձությունները փոխկապված են, մեկը կատարվում է մյուսի հենքի վրա: Տվյալ դեպքում այդ կապը գործողության ձևի կամ միջոցի իմաստային հարաբերության վրա է հիմնված, այսինքն՝ վերլուծությունը իրականացվել է նաև այդ զրույցները դիտարկելու միջոցով: Այսպիսով՝ երկու իմաստային հարաբերություններ այս դեպքում հանդես են գալիս միախառնված կերպով, իսկ համապատասխան հոմանիշ նախադասությամբ փոխարինելու դեպքում այդ իմաստներից մեկն անպայման կկորչեր (*This paper reflects on conversations... and analyzes why...** կամ *This paper reflects on conversations... by means of which it analyzes why...**):

Որպես հիմք ընդունելով երկրորդական ստորոգման կառույցների միջոցով գիտելիքների ներկայացման ճանաչողական հիմքերի դիտարկմանը նվիրված ուսումնասիրությունները⁴ մեկից ավելի ստորոգում պարունակող բազմանախադրույթային նախադասության սահմաններում արտակա և ներակա ստորոգման կառույցներով ներկայացված իրողությունները կամ նախադրույթները նպատակահարմար ենք գտնում անվանել միկրոիրադարձություններ: Մակրոիրադարձությունը համապատասխանում է արտակա և ներակա ստորոգումներով ներկայացված իմաստային կառուցվածքների փոխազդեցության հիման վրա ձևավորված բազմանախադրույթային նախադասության իմաստային-բովանդակային կառուցվածքին: Ինչպես ցույց է տալիս վերոնշյալ օրինակի վերլուծությունը, մակրոիրադարձության շարահյուսական ձևակերպումը գիտելիքների կառուցման ճանաչողական գործընթաց է, որում մի միկրոիրադարձությունն ընկալվում է մյուսի հենքի վրա:

⁴ Talmy L. *Toward a Cognitive Semantics. Volume I: Concept Structuring Systems.* Cambridge/Massachusetts/London: The MIT Press, 2001; Langacker R.W. *Concept, Image and Symbol: The Cognitive Basis of Grammar.* Berlin/ New York: Mouton de Gruyter, 1991; Croft W. Cruse D.A. *Cognitive Linguistics.* Cambridge: Cambridge University Press, 2004.

Բացի միախառնված իմաստային-տրամաբանական հարաբերություններ արտահայտելու միջոցով լրացուցիչ իմաստային նրբերանգներ իրացնելուց, դերբայական դարձվածներն ապահովում են հնարավորինս սեղմ ու տեղեկատվությամբ հագեցած շարադրանք նախադասության թեմատեմատիկ կազմակերպման հատկության շնորհիվ: Ընդ որում, նշված գործառույթի իրականացման հնարավորություն ստեղծում է դերբայական դարձվածների յուրօրինակ շարահյուսական կառուցվածքը, որը թույլ է տալիս ներակա կերպով ներկայացնել հայտնի տեղեկատվությունը:

Փաստական նյութի վերլուծությունը ցույց է տալիս, որ անզերեն գիտական խոսքում բավականին հաճախ հանդիպում են դերբայական դարձվածներ, որոնք, հանդես գալով նախադասության գոյականական անդամի պաշտոնում (ենթակա, գոյականական անդամի լրացումներ, ստորոգելիական վերադիր), գործածվում են այն ժամանակ, երբ գործողության սուբյեկտը կա՛մ ընդհանուր է, կա՛մ անհայտ: Տվյալ դեպքում կարևորը ոչ թե գործողություն կատարողին հիշատակելն է, այլ հենց գործողության փաստը ամփոփ կերպով նշելը: Հետևյալ օրինակում, որը վերցված է գիտական հոդվածի տեքստից, ներկայացված է ոչ մեծ պարբերություն, որի սահմաններում նշված գործառույթով հանդես են գալիս 10 դերբայական դարձվածներ (gerundial phrases):

*The advocacy framework is based upon **pursuing multiple and diverse strategies for achieving impact, including working closely with decision-makers ('inside track'), applying pressure and confrontation ('outside track'), and articulating evidence- and interest- (or values-) based arguments.** Beyond previous frameworks for policy change, our model emphasizes the central role of coalition building and **carefully framing issues in human rights terms as critical steps in the development of advocacy strategies and campaigns.** Describing the **process and outcomes of policy change in relation to the framework** is relatively straightforward. By contrast, **attributing policy change to the specific interventions and strategies undertaken** is complex, resource-intensive, often impossible, and can be counterproductive. Even more challenging than **attributing positive change to our work** is **attributing “the absence of negative change” (showing that “things did not get worse”).** (A. W. Mc. E. H. R. A. C. J. S. W.: 97)*

Դերբայական դարձվածի՝ նշված գործառույթով այսպիսի լայն գործածությունն ուղղակիորեն կապված է գիտական խոսքի բնորոշ ոճական առանձնահատկությունների, մասնավորապես՝ գիտական տեքստի չեզոքության և օբյեկտիվության պահպանման պահանջի հետ, որը տվյալ դեպքում ապահովվում է նաև դերբայական դարձվածի (gerundial phrase) շնորհիվ սուբյեկտը ներակա կերպով արտահայտելու միջոցով: Մյուս կողմից՝ դերբայական դարձվածները ներակա ստորոգման շնորհիվ թույլ են տալիս հա-

դորդել մեծաձավալ տեղեկատվություն ընդամենը մեկ պարզ նախադասության սահմանում:

Երկրորդ գլխի չորրորդ ենթագլխում («Լեզվական Կրկնաման վերասույթային դրսևորումները») առաջ է քաշվում այն տեսակետը, որ անգլերեն գիտական դիսկուրսում հաճախ տեղեկատվությունը ներակա կերպով հաղորդելու հաշվին խոսքի խտացումը տեղի է ունենում ոչ թե մեկ ասույթի, այլ ամբողջ տեքստի կամ վերասույթային մակարդակում: Այստեղ տեքստի իմաստի ձևավորման հարցում կարևոր դեր են կատարում կանխենթադրույթները, խոսակիցների կիրառած հարալեզվական միջոցները՝ ժեստերն ու դիմախաղը, ինչպես նաև գրավոր կամ բանավոր խոսքին ուղեկցող գծապատկերային, աղյուսակային և այլ տիպի պատկերները:

Աշխատանքի երրորդ գլուխը («Փոխաբերությունը՝ որպես լեզվական Կրկնաման սկզբունքի իրացման միջոց») բաղկացած է երկու ենթագլուխներից: **Առաջին ենթագլուխը («Փոխաբերությունը՝ որպես իմաստի խորացման լեզվաճանաչողական կաղապար»)** դիտարկում է փոխաբերությունը՝ որպես տեղեկատվության խտացման միջոց իմաստաբանական-ճանաչողական մակարդակում: Փոխաբերության ճանաչողական տեսության համաձայն՝ փոխաբերությունը կազմում է մեր առօրյայի անբաժան մասը՝ դրսևորվելով ոչ միայն լեզվում, այլև մեր մտածողության մեջ: Հետևաբար առաջարկվում է փոխաբերությունները դիտարկել որպես փոխաբերական հասկացույթներ⁵: Մասնավորապես՝ մարդու գիտակցության մեջ հասկացույթների խմբերի միջև գոյություն ունեն խորքային կառուցվածքային հարաբերություններ, որոնք թույլ են տալիս այս կամ այն հասկացույթն ընկալել մեկ ուրիշ հասկացույթի միջոցով: Որպես ասվածի ապացույց՝ կարելի է բերել անգլերենի up և down հասկացույթների վրա հիմնված փոխաբերությունների օրինակը: Քանի որ ուղիղ կեցվածքը, որպես կանոն, ցույց է տալիս, որ անձը հպարտ է, ինքնավստահ, ունի բարձր տրամադրություն և այլն, happy հասկացույթը հաճախ հանդես է գալիս up (դեպի վեր, վերև, ավելի բարձր) իմաստն արտահայտող բառերի վրա հիմնված այնպիսի փոխաբերություններում, ինչպիսիք են՝ My spirits rose, That boosted my spirits, I'm feeling high և այլն: Մինչդեռ կորացած, կծկված, կուչ եկած կեցվածքը սովորաբար զուգորդվում է վիստվածության ու տխրության հետ: Հետևաբար sad հասկացույթը հաճախ իրացվում է down (դեպի ներքև, ցած, վար) բառի միջոցով, ինչպես օրինակ՝ I'm feeling down փոխաբերության մեջ: Այսպիսով՝ հուզական վիճակ ցույց տվող happy-sad հասկացույթները ֆիզիկական հատկանիշի (ուղիղ կամ կուչ եկած կեցվածք) առաջացրած զուգորդումների հիման վրա ընկալվում են ուղղություն ցույց տվող up-down հասկացույթների միջոցով: Իսկ փոխաբերությունն իր կառուցվածքում խտացնում և ամփոփ ներկայացնում է

⁵ Lakoff G., Johnson M. *Metaphors We Live By*. Chicago: University of Chicago Press, 1980.

մարդու ֆիզիկական և հուզական վիճակի կապի մասին այս պատկերացումները:

Փոխաբերությունը հանդես է գալիս որպես միջոց, որի օգնությամբ խոսողը հաղորդում է նոր տեղեկատվություն խոսքի հասցեատիրոջը հայտնի տեղեկատվության միջոցով: Հին և նոր տեղեկությունների փոխազդեցության արդյունքում էլ ձևավորվում է որակապես տարբեր, նոր կառույց, որի ներսում տեղի է ունենում տարբեր իրողությունների «միաձուլում», որն էլ պայմանավորում է իմաստային խտացման մեխանիզմի գործառությունը: Այսպիսով՝ փոխաբերությունը դիտարկվում է որպես իրականության ոչ կարծրատիպային ճանաչողության և վերարտադրման լեզվամտածողական կաղապարի վրա հիմնված իմաստի խտացում, որը թույլ է տալիս, լեզվական միջոցների գործածությունը նվազագույնին հասցնելով հանդերձ, իրականության այս կամ այն դրվագը խոսքայնացնել հնարավորինս ամբողջական և ընդգրկուն պատկերի ստեղծմամբ՝ արդյունքում նաև արագացնելով տեղեկատվության հաղորդման գործընթացը:

Երրորդ գլխի երկրորդ ենթագլխում («Փոխաբերության գործառության յուրահատկությունները գիտական դիսկուրսում») դիտարկվում է փոխաբերությունը՝ որպես գիտական մտածողության և դրա արդյունքում ստեղծվող գիտական խոսքի բնորոշ առանձնահատկություն, և վերլուծվում են որպես լեզվական տնտեսման միջոց հանդես եկող անհատական-հեղինակային փոխաբերությունների գործառույթներն անգլերեն գիտական դիսկուրսում: Վերլուծված օրինակներում հաճախ հանդիպում են այնպիսի անհատական-հեղինակային փոխաբերություններ, որոնց բուն նպատակը խոսքի հասցեատիրոջ համար հնարավորինս մատչելի, բայց և ամփոփ կերպով գիտական հասկացություն ներկայացնելն է: Գիտական նյութի մատչելիությունն ապահովելու նպատակով, որը պայմանավորված է նաև գիտական շարադրանքի հակիրճության պահանջով, խոսողը փորձում է խոսքի հասցեատիրոջ համար նոր, անհայտ գիտական երևույթը նկարագրել կամ բացատրել խոսքի հասցեատիրոջը ծանոթ՝ ոչ գիտական աշխարհի իրողությունների հետ համեմատելու միջոցով: Այսպես՝

*What texting is, despite the fact that it involves the brute mechanics of something that we call writing, is **fingered speech**. That's what texting is... (Mc.T.K.L.: 5:20-5:55)*

Այս օրինակում հեղինակը դիմում է *fingered speech* փոխաբերությանը: Մասնավորապես՝ հեղինակի խնդիրն է ցույց տալ էլեկտրոնային հաղորդագրությունների (*texting*) առանցքային տարբերությունը սովորական գրավոր խոսքից (*writing* կամ *written speech*): Հենց այդ պատճառով էլ հեղինակը վերցնում է *speech* բառը և դրան ավելացնում *fingered* մակդիրը՝ ի տարբերություն *written* որոշի, որպեսզի բացատրի, որ հաղորդագրությամբ հաղորդվող խոսքը պարզապես գրավոր տեքստ չէ: Դրա ստեղծման եղանակը՝

բջջային հեռախոսի մանր, ինչ-որ տեղ անհարմար ստեղնաշարի վրա մատներով տեքստ մուտքագրելը, հենց պայմանավորում է հաղորդակցության այս ձևի լեզվական առանձնահատկությունները, այդ թվում՝ հապավումների առատությունը, որոնք թույլ են տալիս հաղորդակցվել հնարավորինս քիչ սիմվոլներով: Հենց այս բնորոշ առանձնահատկությունից ելնելով էլ, ըստ հեղինակի, այն պետք է դիտարկել ոչ թե որպես աղճատված գրավոր տեքստ, այլ գրավոր և բանավոր հաղորդակցության կողքին մի երրորդ տարատեսակ: Այսպիսով՝ պարզապես մակդիրի վրա հիմնված այս պարզ փոխաբերությունն իր մեջ խտացնում, ամփոփում է մի ամբողջ գիտական մոտեցում տվյալ հարցի վերաբերյալ:

Փոխաբերության միջոցով տեղեկատվության խտացման և հաջող վերծանման գործում կարևոր դեր է խաղում արտալեզվական գիտելիքների վրա հիմնված ներիմաստը: Օրինակ՝

*We live in a modern, global world. Terrorists have actually adapted to it. It's something we have to, too, and that means the people who are working on counterterrorism responses have to start, in effect, **putting on their Google-tinted glasses**, or whatever. (Mc.T.F.B.: 1:09-1:31)*

Նշված փոխաբերության միջոցով ընդամենը մի քանի բառի սահմաններում ամփոփված ներակա տեղեկատվությունը խոսքի հասցեատերը կարող է համարժեք կերպով վերծանել, եթե գաղափար ունի այն մասին, թե ինչ է Գուգլի «խելացի» ակնոց կոչվող սարքը (*Google-tinted glasses*): Դա բոլորովին վերջերս՝ 2012 թվականին, Գուգլի գաղտնի լաբորատորիայում նախագծված, ակնոցի պես կրվող «խելացի» սարք է, որն օժտված է նույն գործառույթներով, ինչ ժամանակակից սմարթֆոնները և պլանշետները: Այդ թվում՝ թույլ է տալիս դրանք կրողին ստանալ ամենաթարմ տեղեկությունները եղանակի, երթևեկության, տարբեր հաստատությունների տեղակայման վայրի վերաբերյալ և այլն: Շրջակա աշխարհի վերաբերյալ թարմ ու մանրամասն տեղեկատվություն հավաքագրելու հենց այս գործառույթի, ինչպես նաև նշված սարքավորման՝ գիտության վերջին ճիշտից մեկը լինելու փաստի վրա հիմնվելով էլ՝ ելույթի հեղինակը, խոսելով ահաբեկչության դեմ պայքարի նորագույն մեթոդների մասին, կոչ է անում մարդկանց «հագնել իրենց» Գուգլի «խելացի» ակնոցը: Փոխաբերության հեղինակը նկատի ունի, որ նախ՝ մարդիկ պետք է զգոն ու աշախուրջ լինեն իրենց շրջապատում տեղի ունեցող փոփոխությունների նկատմամբ, ասես աշխարհին հետևելիս լինեն անընդհատ թարմ տեղեկատվություն մատակարարող «խելացի» ակնոցի միջոցով, ապա՝ նաև ճկուն լինեն այդ փոփոխություններին հարմարվելու հարցում, բաց լինեն պայքարի նորարարական մեթոդների առջև, այդ թվում՝ հակահաբեկչական պայքարում կիրառեն նորագույն գաղափարներ ու տեխնոլոգիաներ: Այսպիսով՝ ընդամենը մեկ արտահայտության սահմաններում խտացնելով արտալեզվական բնույթի տեղեկություններ և ունկնդիրների մոտ առաջացնելով համապատաս-

խան զուգորդումներ՝ ելույթ ունեցողը փոխաբերական պատկերի միջոցով հաղորդում է մի ամբողջ ուղերձ:

Ընտրված գործնական նյութի վերլուծությունը ցույց է տալիս, որ հաճախ փոխաբերությունը «գրադեցնում» է մի ամբողջ պարբերություն և նույնիսկ պարբերություններ: Ինչպես երևում է հաջորդ օրինակից, անգամ հանդիպում են տեքստեր, որոնք ամբողջությամբ հիմնված են փոխաբերության վրա, այսինքն՝ դրանցում հեղինակի ասելիքը խոսքի հասցեատիրոջը փոխանցելու ընտրված միջոցը ներակա համեմատության վրա հիմնված փոխաբերական պատկերն է, որի իրացմանն ուղղված են տեքստում կիրառված բոլոր լեզվական միջոցները: Այսպիսի տեքստերի հիմքում ընկած փոխաբերական պատկերը հաճախ ներկայացված է հենց տեքստի վերնագրում, որն ասես խտացված կերպով արտացոլում է տեքստի բովանդակությունը, օրինակ՝ *Terrorism Is a Failed Brand*:

... For my part, what I wanted us to do was just to look at terrorism as though **it was a global brand, say, Coca-Cola**. Both are fairly bad for your health. If you look at it as a brand in those ways, what you'll come to realize is, **it's a pretty flawed product**. As we've said, it's pretty bad for your health, it's bad for those who it affects, and it's not actually good if you're a suicide bomber either. **It doesn't actually do what it says on the tin**. You're not really going to get 72 virgins in heaven...(Mc.T.F.B.: 1:31-02:20)

Մեջբերված տեքստային հատվածում հեղինակը ահաբեկիչներին և նրանց դեմ պայքարողներին համեմատում է շուկա հանված երկու համազոր կոմերցիոն ապրանքների, իսկ նրանց միջև ընթացող պայքարը՝ շուկայական մրցակցության հետ՝ առաջ քաշելով այն գաղափարը, որ մրցակիցներից ով ավելի խելացի մարքեթինգային քայլեր անի, նա էլ կգրավի շուկայի առաջատարի դիրքը: Հեղինակը ահաբեկչությունը համեմատում է համաշխարհային ապրանքանիշի՝ Կոկա-Կոլայի հետ այն ընդհանրության հիման վրա, որ ինչպես Կոկա-Կոլան, այնպես էլ ահաբեկչությունը վնասակար են առողջության համար: Հենց այս ընդհանուր հատկանիշի վրա հիմնվելով էլ՝ հեղինակը համապատասխան փոխաբերությունների միջոցով պիտակավորում է ահաբեկչությունը որպես «խոտան ունեցող ապրանք», որն իրականում չի կատարում թիթեյա տարայի վրա գրված «խոստումը» (Coca-Cola...Makes Good Things Taste Better (1956), Things Go Better With Coke (1963), Coke Adds Life (1976), Have a Coke and a Smile (1979), Coca-Cola.Enjoy (2000), Life Tastes Good (2001), Open Happiness (2009) (<http://www.coca-colacompany.com/stories/coke-lore-slogans/>): Այլ կերպ՝ ինչպես Կոկա-Կոլան է երջանկություն պարգևելու խոստումներ արտահայտող նման լոգունգներով իրականում քայքայում սպառողների առողջությունը, այնպես էլ իսլամիստ ահաբեկիչների գաղափարախոսությունն է խլում մահապարտների կյանքը՝ վերջիններիս խոստանալով երկնային արքայություն և բազում հաճույքներ անդրշիրիմյան աշխարհում, եթե «խմեն այդ անմահական խմիչքը», ասել է թե՛ «հանուն

գաղափարի» ավիրածություններ կատարեն երկրային կյանքում: Նշված փոխաբերությունները ցույց են տալիս, թե ինչպես է, արտալեզվական գիտելիքի վրա հիմնվելով, հեղինակը կարողանում ներակա կերպով հաղորդել տեղեկատվությունը: Սրա նպատակը տվյալ դեպքում ոչ միայն առանց այն էլ մեծածավալ տեղեկատվությամբ հագեցած տեքստը չծանրաբեռնելն է, այլև ահաբեկչական գաղափարախոսությանը բացահայտ կերպով գնահատական տալուց խուսափելը: Այսպիսով՝ փոխաբերությունը թույլ է տալիս անուղղակիորեն խոսել զգուշավորություն պահանջող նուրբ թեմաների մասին՝ շրջանցելով քննադատություն կամ նույնիսկ մեղադրանք հնչեցնելու վտանգը և դրանով իսկ հնարավորինս նվազեցնելով սուբյեկտիվության աստիճանը գիտական խոսքում: Բացի այդ, ինչպես երևում է բերված օրինակներից, փոխաբերությունները նաև կոտրում են գիտական շարադրանքի միապաղարկությունը՝ ապահովելով խոսքի արագ ընկալում:

Ուսումնասիրության վերջում իրականացված հաշվարկն արտացոլում է խնդրո առարկա կառույցների բաշխումը հավաքագրված փաստական նյութի շրջանակներում, իսկ աշխատանքում լեզվական տնտեսման դրսևորումների դիտարկման արդյունքները թույլ են տալիս նորովի գնահատել լեզվական տնտեսման միջոցների հաղորդակցական ներուժը և տեքստակազմիչ նշանակությունը անգլերեն գիտական խոսքի կառուցման հարցում:

Եզրակացության մեջ ամփոփվում են աշխատանքի հիմնական արդյունքները.

- Լեզվական տնտեսման սկզբունքն իրացվում է խոսքի խտացման միջոցով, որը, հաղորդակցության պահանջներին համապատասխան, առավելագույնս արդյունավետ հաղորդակցության ապահովմանն ուղղված օրինաչափ գործընթաց է: Վերջինս ենթադրում է տեղեկատվության ներակայում և ներակա տեղեկատվության վերականգնում, որտեղ առանցքային դեր է կատարում լեզվական և արտալեզվական համատեքստը:

- Խտացումը տեղի է ունենում խոսքաստեղծման գործընթացի ներքին ծրագրավորման փուլում՝ տրամաբանական-բովանդակային մակարդակում՝ արտաքին խոսքում դրսևորվելով լեզվական բոլոր մակարդակներում: Այստեղ կարևոր դեր են խաղում հաղորդակցության գործաբանական և հանրամշակութային պահանջները: Մասնավորապես՝ լեզվական տնտեսման միջոցների գործածության բարձր հաճախականությունը գիտական խոսքում պայմանավորված է գիտական հաղորդակցության մի շարք առանձնահատկություններով, այդ թվում՝ տեղեկատվական հագեցվածության և շարադրանքի հակիրճության ու կոնկրետության, մտքի կոտ ու տրամաբանական կառուցվածքի ապահովման, տեղի և ժամանակի տնտեսման նկատառումներով և այլն:

- Ձեռնված կառույցները՝ որպես լեզվական տնտեսման սկզբունքի իրացման շարահյուսական միջոց, ի տարբերություն անավարտ ասոյթների և

միակազմ նախադասությունների, օժտված են ներակա տեղեկատվություն հաղորդելու հատկությամբ: Դրա շնորհիվ գեղջված կառույցները մասնակցում են տեքստի տեղեկատվայնության ստեղծմանը: Մասնավորապես՝ անգլերեն գիտական խոսքում հանդես եկող գեղջված կառույցները խոսքնկերների խոսքային փոխներգործության ընթացքում համատեքստի, հարատեքստի, խոսքնկերների հենքային գիտելիքների ընդհանրության առկայությամբ լեզվական միջոցները տնտեսելու հիմնական գործառույթին զուգահեռ իրականացնում են ասույթի առավել կարևոր՝ նոր տեղեկատվություն պարունակող բաղադրիչի շեշտադրման գործառույթ: Դրանից բխում են իմաստը խթանելու և ճշգրտելու, ինչպես նաև հուզական-գնահատողական գործառույթները:

- Դերբայական դարձվածները երկրորդական ստորոգման հաշվին նպաստում են տեքստի տեղեկատվայնության բարձրացմանը՝ միաժամանակ չձանրաբեռնելով դրա ձևական կառուցվածքը: Դերբայական դարձվածները յուրահատուկ շարահյուսական կառուցվածքի շնորհիվ ներկայացնում են այնպիսի իմաստային-տրամաբանական հարաբերություններ, որոնք, որպես կանոն, կորչում են արտակա ստորոգում պարունակող համապատասխան շարահյուսական հոմանիշով փոխարինելու դեպքում: Նշված կառույցներն օժտված են ասույթի՝ իրենց նախորդող և հաջորդող հատվածները շեշտադրելու հատկությամբ, որով էլ պայմանավորված է դրանց տեքստակազմիչ դերն անգլերեն գիտական խոսքում: Այս գործառույթն իր հերթին պայմանավորում է դերբայական դարձվածների կիրառությունը որպես լեզվական տնտեսման միջոց: Մասնավորապես՝ մեկ նախադասությամբ հանդես եկող մակրոիրարարձության շրջանակներում տեղեկատվության որոշակի հատված ներակա կերպով հաղորդելու, միաժամանակ որոշակի հատված ընդգծելու շնորհիվ դրանք թույլ են տալիս, լեզվական միջոցների տնտեսմամբ հաղորդել մեծածավալ տեղեկատվություն՝ ներկայացվող իրականության տարբեր իրողությունների միջև առկա հարաբերությունների մանրակրկիտ ներկայացմամբ:

- Խտացումը հաճախ տեղի է ունենում վերասույթային մակարդակում՝ կանխենթադրույթների հիման վրա որոշակի տեքստային հատվածներ բաց թողնելու կամ տեղեկատվությունը ներակա կերպով հաղորդելու, ինչպես նաև ուղեկցող գծապատկերային, աղյուսակային և այլ տիպի պատկերների միջոցով, իսկ բանավոր խոսքի դեպքում՝ խոսողի գործածած հարալեզվական միջոցների հաշվին, որոնք ուղղված են տեքստն ավելի սեղմ դարձնելուն:

- Փոխաբերությունը՝ որպես նվազագույն թվով լեզվական միավորներով իրականության այս կամ այն դրվագը հնարավորին սեղմ ներկայացնելու միջոց, անգլերեն գիտական խոսքում իրականացնում է մի շարք գործառույթներ: Այն ծառայում է գիտական ուսումնասիրության նյութի ավելի մատչելի ներկայացմանը, ընձեռում է էթիկայի տեսանկյունից զգուշություն պահանջող թեմաների մասին անուղակիորեն խոսելու և խոսողի դիրքորոշման

սուբյեկտիվությունը քողարկելու հնարավորություն: Այս գործառույթի իրացումը համապատասխանում է գիտական խոսքի օբյեկտիվության պահպանման պահանջին: Բացի այդ, խոսքին արտահայտչականություն հաղորդելու միջոցով փոխաբերությունը նպաստում է գիտական շարադրանքի միապաղաղությունը մեղմացնելուն, ինչն արագացնում է տեղեկատվության հաղորդման գործընթացը՝ տնտեսելով լեզվական միջոցները, խոսքընկերների էներգիան ու ժամանակը:

• Լեզվական տնտեսման ուսումնասիրված միջոցներն անգլերեն գիտական խոսքի տարբեր տարատեսակներում հանդես են գալիս գործածության տարբեր հաճախականությամբ: Բուն գիտական կամ ակադեմիական դիսկուրսում ակնհայտորեն գերակշռում են դերբայական դարձվածները, մինչդեռ գիտահանրամատչելի դիսկուրսին բնորոշ է վերլուծված երեք տիպի կառույցների քիչ թե շատ հավասարաչափ բաշխում, ինչը պայմանավորված է գիտական դիսկուրսի տվյալ տարատեսակում դերբայական դարձվածների հաճախականության անկմամբ և զեղչված կառույցների ու փոխաբերությունների մասնաբաժնի զուգահեռ աճով: Գիտական անգլերենի գրավոր դրսևորումներն աչքի են ընկնում դերբայական դարձվածների առատությամբ, մինչդեռ բանավոր խոսքին առավել բնորոշ են զեղչված կառույցները: Փոխաբերությունը գրեթե հավասարապես գործածվում է ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր գիտական դիսկուրսում: Ընդհանուր առմամբ արձանագրված արդյունքների բացատրությունը պետք է փնտրել անգլերեն գիտական խոսքի ընտրված տարատեսակների ոճաժանրային առանձնահատկությունների և դրանցից բխող տարբերությունների մեջ:

Հետազոտության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում՝

1. Լեզվական խոսացումը՝ որպես տնտեսման սկզբունքի իրացման միջոց // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում, N 15, Երևան, ԵՊՀ հրատ., 2013, էջ 91-100 (համահեղինակ Ա. Չուբարյան):

2. Ձեռնումը՝ որպես լեզվական տնտեսման միջոց // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում, N 2(17), Երևան, ԵՊՀ հրատ., 2014, էջ 73-86 (համահեղինակ Ա. Չուբարյան):

3. Փոխաբերությունը՝ որպես լեզվական տնտեսման սկզբունքի իրացման միջոց ճանաչողական մակարդակում // Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում, N 7, Երևան, «Լուսակն» հրատ., 2016, էջ 47-57:

4. The Text-Organizing Function of Compression in English Scientific Discourse // Armenian Folia Anglistika, N 2(16), Yerevan, Yerevan State University Press, 2016, pp. 15-26 (համահեղինակ Ա. Չուբարյան):

ЛИЛИТ АШОТОВНА САРГСЯН

ПРОБЛЕМА ЯЗЫКОВОЙ ЭКОНОМИИ В АНГЛИЙСКОЙ НАУЧНОЙ РЕЧИ

РЕЗЮМЕ

Реферируемая диссертация посвящена исследованию особенностей проявления языковой экономии в английском научном дискурсе. В качестве синтаксических средств реализации принципа языковой экономии в речи выступают эллиптические конструкции, причастные и деепричастные обороты, а также разные способы сокращения текста на уровне сверхфразового единства. Метафора рассматривается как лингвокогнитивная модель смысловой компрессии, через которую принцип экономии реализуется на семантико-когнитивном уровне. Данные средства языковой экономии являются сжатыми по форме, однако смыслоемкими конструкциями. Они способствуют сокращению формальной структуры высказывания посредством выражения разных импликаций, которые обеспечивают высокую информативность текста. Таким образом, конструкции, выступающие в качестве способа компрессии информации в речи, позволяют передать по возможности максимальный объем информации с помощью затраты минимального количества языковых единиц, что обеспечивает краткость и логичное построение повествования, а также способствует экономии места и времени. При этом эффективность коммуникации определяется не только количеством отобранных единиц, но и их ситуативной, прагматической и функциональной обусловленностью. Эта особенность средств реализации принципа языковой экономии отчасти объясняет высокую частотность использования их в разных регистрах речи, в том числе и в английском научном дискурсе.

Целью настоящей работы является комплексный анализ функций средств реализации языковой экономии в английском научном дискурсе, а также выявление их коммуникативной значимости и роли в создании и восприятии англоязычных научных текстов.

Актуальность работы обусловлена необходимостью лингвокогнитивного и прагмалингвистического исследования функций данных конструкций в сфере англоязычной научной коммуникации, тесно связанных с их способностью компрессии информации.

Новизна исследования определяется тем, что в ней впервые предпринимается попытка исследования языковой экономии в контексте рассмотрения структурно-семантических, прагматических и функциональных особенностей коммуникации. Кроме того, новизна работы обусловлена

когнитивно-прагматическим осмыслением роли языковой экономии в научном дискурсе, а также выявлением ее текстообразующей значимости.

Теоретическая значимость работы состоит в том, что положения, разработанные в результате исследования позволяют по-новому оценить различные механизмы речеобразования и речевосприятия, определить текстообразующий потенциал языковой экономии в английской научной речи, таким образом способствуя обогащению и дальнейшему развитию коммуникативной и когнитивно-прагматической теории речи.

Результаты работы имеют **практическую значимость** и могут успешно применяться в теоретических и практических курсах в области прагмалингвистики, лингвистики текста, функциональной грамматики и стилистики. Они также могут способствовать развитию и повышению эффективности навыков английской научной речи.

LILIT ASHOT SARGSYAN

LINGUISTIC ECONOMY IN ENGLISH SCIENTIFIC DISCOURSE

SUMMARY

The research is devoted to the analysis of the economy principle realization in English scientific discourse. At the syntactic level (including that of supraphrasal unity) linguistic economy is realized through elliptical utterances, participial and gerundial constructions as well as other means of text compression. Meanwhile, metaphor represents a linguo-cognitive model of compressing information at the semantic-cognitive level. Due to unique syntactic structure, textual compression as a realization of the economy principle serves the purpose of forming implicit meanings and presuppositions which in their turn enable to convey a great volume of information by using as few linguistic units as possible. It is by the latter fact that the extensive use of text compression in different functional styles of the language can be accounted for. Namely, English scientific discourse can be characterized as a key area of the economy principle realization through text compression, considering some basic requirements of this particular sphere of human communication such as the conciseness and clarity as well as high degree of informativity of scientific texts, economical use of time, printing area, etc. However, it is to be noted that efficiency in the exchange of information is determined not only by the number of language means used but also by the situational, functional and pragmatic requirements of

communication. Hence, the pragmatic and linguo-cognitive aspects of the given constructions ensuring the economical use of language in English scientific texts constitute the focus of the present paper.

The **aim** of the research is the comprehensive analysis of the functions carried out by the above-mentioned constructions in English scientific discourse with regard to their potential for compressing information. Furthermore, the ultimate goal of the analysis along these lines is to reveal their communicative value and significance in the production and perception of scientific texts in English.

The **topicality** of the research consists in the necessity of applying linguo-cognitive and pragma-linguistic approaches to the study of the peculiar functioning of the chosen linguistic constructions, which is closely related to their ability to compress information.

The **novelty** of the research is determined by the fact that for the first time an attempt has been made to study the peculiarities of linguistic economy in scientific communication in the light of the structural and semantic, pragmatic and functional parameters of discourse. The novelty of the research is also related to the linguo-cognitive analysis of the text-organizing function of compression with special reference to scientific discourse.

From the **theoretical perspective** the results of the study have important implications for the clarification of the mechanisms of speech production and speech perception as well as definition of the text-organizing potential of linguistic economy in English scientific discourse, thus greatly contributing to the further development of communicative, cognitive-pragmatic theory of discourse.

The findings of the work have significant **practical value** and can be implemented in theoretical and practical courses in Pragmalinguistics, Text linguistics, Functional grammar and Stylistics. They may also contribute to the development and enhancement of efficiency skills in written and spoken modes of English for scientific communication.

A handwritten signature in black ink, appearing to be 'A. P. W.', located in the bottom right corner of the page.